ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հունվարի 2020 թվական N 05-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով,

որոշում եմ

1.Քաղաքացի Արմեն Կարապետյանինև Էլեն Առաքելյանին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքում գտնվող 0.35 հա գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիր 07-043-0138-0008) հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ անասնագոմի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2020թ.հունվարի 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունվարի 2020 թվական N 06-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները՝ *որոշում եմ.*

1.Մայակովսկի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 15-ի N 03-Ն որոշումը պաշտոնական հրապարակել 2020 թվականի հունվարի 17-ին :

2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Նորմատիվ իրավական ակտը հրապարակելու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

2020թ.հունվարի 16
Գ.Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հունվարի 2020 թվական N 07-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 10-ի թիվ 04-Ա որոշումը , Մայակովսկի համայնքի բնակիչներ Գեղամ Ասատրյանի և Սամվել Գրիգորյանի դիմումները ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, ***որոշում եմ***՝

1. Մայակովսկի համայնքի 2020 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն.
   Գեղամ Ասատրյանին - 50 000 / հիսուն հազար/ դրամ,
   Սամվել Գրիգորյանին -50 000 / քառասունհինգ հազար/ դրամ ,
   Ընդամենը 100 000 / հարյուր հազար/ դրամ :

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2020թ.հունվարի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հունվարի 2020 թվական N 08-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 01-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի , հիմք ընդունելով «Աշոտ Հակոբյան» ԱՁ-ի կողմից 2020 թվականի հունվարի 21-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 10-ի «Ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու մասին» թիվ 01-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման նախաբանի առաջին պարբերությունում «ինքնակամ կառուցված շինությունները» բառերից հետո և որոշման 1-ին կետում « մակերեսներով» բառերից հետո լրացնել «, ինքնակամ բացված մեկ դուռ և երեք պատուհան» բառերը,

2) որոշման նախաբանի 2-րդ պարբերությունում «5.08 քառ.մետր» բառերից հետո լրացնել «ինչպես նաև բացել է ինքնակամ մեկ դուռ և երեք պատուհան» բառերը,

3)որոշման երկրորդ կետի 1-ին ենթակետում «դրամ» բառից հետո լրացնել « և ինքնակամ բացված մեկ դռան և երեք պատուհանների համար 5000(հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ » բառերը,

2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱԲՍԵՂՅԱՆ

2020թ.հունվարի 21
Գ.Մայակովսկի